

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՏԻՍՈՒԹԻՒՆ

Ձկայ մեր ազգային կեանքի մէջ փոքր ի շատէ նշանա-
կութիւն ունեցող մի երևոյթ, որ մեր ժողովրդական բանահիւ-
սութեան նիւթ դարձած չլինի: Ժողովրդական բանահիւսու-
թիւնից աչքի ընկնող ճիւղը մեզնում բանաստեղծութիւնն է,
որի երկու պլսաւոր տեսակներն են լելէները՝ որ բացարձա-
կապէս հայ գաւառացի անուս կանանց ստեղծագործութիւնն է
և «խաղերը» որ աշուղական բանաստեղծութիւնն է: Այդ բանաս-
տեղծութեան առաւելութիւնը շատ մեծ է. անարուեստ է նա,
ուստի և ժողովրդի. զգացմունքի անկեղծ արտայայտութիւն,
այդ պատճառով էլ աւելի տեսական և գրեթէ անմահ է, գոնէ
այնքան, որքան ժամանակ հայ գաւառական կեանքը կայ:

Ժողովրդական բանաստեղծութեան էական նիւթերից
մէկը ազգային աղէտներն են. հայ ժողովուրդն աղէտ շատ է
տեսել ու դժբաղդաբար բնական ճանապարհով վիշտ երգող
ազգ է: Տաճկահայոց կոտորածը, դպրոցների փակումը, զինուո-
րակոյը շատ «լելէներին» և «խաղերին» նիւթ դարձան: Մեր՝
հոգով-բանաստեղծ ժողովրդի լեզուն լռել չէր կարող Ռուսաս-
տանի Հայոց ջարդի վրայ: Թէպէտև ժողովուրդը դեռ սարսա-
փից աչք չի բացանում, որ իւր զգացմունքներն արտայայտէ
նոր նոր սրտակոտոր բանաստեղծութեամբ, բայց և այնպէս
նշաններն արդէն կան:

Ստորև դնում ենք իբրև նմուշ երկու ոտանաւոր, որ Վա-
յոց Ձորի ջարդերի շուրջն է կազմուած:

Դրանցից մէկն Այարի յարձակումն է (1905 թ. Մայի-
սին): Իսկ միւսը պատկերացնում է գաւառացի հայի հասկացո-
ղութիւնը կառավարութեան վերաբերման մասին դէպի հայե-
րը, կամ ժամանակակից պօլիտիկան: Երկու ոտանաւորն էլ
զուտ ժողովրդական չեն, այլ կէս ժողովրդական այսինքն ա-
նուս հայ կնոջ կամ աշուղի ստեղծագործութիւն չեն, որոնց
մէջ հեղինակը միշտ անյայտ է մնում: Դո՞քա մի գաւառացի
ինքնուս զգայուն հայ երիտասարդի հեղինակութիւնն են: Թէև
նրանք գրական արտադրութիւնների նմանութիւն ունին, բայց

Դուք ժողովրդական բանահիւսութեան դրոշմ են կրում: Այդ երիտասարդը նկարագրել է Վայոց Ձորի ժամանակակից բոլոր թշուառութիւնները յանգաւոր ձեռով, իրեն յատուկ բնական տաղանդով: ԽՄԲ.

1. ԱՅԱՐԻ ՎԵՐԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄՆ 17 ՄԱՅԻՄԻ

Վրայով մեր այս խաղաղ աշխարհի
Անցաւ չար դեւը, թշնամին հայի,
Անցաւ ու ցանեց սերմը չարութեան,
Դարեւոր քինով հայ ու թուրք վառուան:
Խաղաղ դրացիք դարձան թշնամի,
Մինն միւսին ջարդել ջնջել կը կամի:
Գիւղ ու քաղաք ողջ յուզուած բոբբոքուած
Իրար վրայ են յարձակոււմ զինուած:
Անտէր է երկիրն և վայրի ոյժը
Ամեն տեղ սփռում է մահուան սև գոյժը:
Թէ գիւղ թէ քաղաք, եթէ է անգոր,
Օրհասն է եկել ողբում դժբաղդ օր:
Վաճառականն արդ ուխտերը բեռնած,
Էլ չ'անցնում ճամբով անհոգ, անկասկած,
Մաճկալ ու հօտաղ արօրի կշտին,
Դուք չեն ճաշակում կէսօրուայ տապին:
Լեռները վրայ հովիւն ուրմի
Չէ արածում հօտն համարձակ, անվախ,
Այժմ դաշտերին մահ, արիւն ու ծովա,
Տիրում է սոսկում, արհաւիրք, երկիւղ:

2. ԽՄԲԱՊԵՏ ԵՒ ՕՖԻՑԵՐ

Խմ. Աման, օֆիցեր ջան, այ օֆիցեր,
Ճամբայ տուր անցնեն իմ ջան ֆիդահներ,
Կոտորում են մեր զաւակն ու կին
Որդիքը անգութ, անարգ խաւածին:
Օֆ. Знать не знаю, дайте оружие
Армяшки Вы, задержаны уже.

Խմ. Ուզում ենք մեր տուն ու տեղ մնայ շէն,
Որ յետ չմնանք հարկ բեզար տալէն
Մենք չենք յարձակում, մեք ենք պաշտպանում,
Մեզ ջարդողերի դէմ ենք մենք գնում:

Աման օֆիցեր ջան, այ օֆիցեր,
 Ճամբայ տուր անցնեն իմ հայ կտրիճներ.
 Օֆիցեր. ՅԵԱԾԵ... և այլն:

Խմբ. Կոմիտէն տուել է մեզ պինդ խրատ,
 Ռուսը չը գտնէ մեզ մօտ արատ,
 Ձեռք չբարձրացնել զօրքի դէմ ոռուաց
 Անգամ սպառնայ մահ մեզ կատաղած:
 Աման օֆիցեր... և այլն:

Օֆ. ՅԵԱԾԵ... և այլն:
 Խմբ. Մեր զէնքն է գալիս մայր Ռուսաստանից-
 Թուրքերի զէնքը պիղծ Տաճկաստանից.
 Ներսիս Թշնամի, դրսից բարեկամ
 Կովկասը կուզէ խլել ժանտ իսլամ:
 Աման օֆ... և այլն:

Օֆ. ՅԵԱԾԵ... և այլն:
 Խմբ. Քանի բացել է Ռուսը պատերազմ,
 Հայն եղել է միշտ նրա զօրքի կազմ,
 Միայն Գօլիցին և չար Վելիչկօն
 Խորթացրին հային, քանդին նրա տուն:
 Աման օֆ... և այլն:

Օֆ. ՅԵԱԾԵ... և այլն:
 Խմբ. Խեղճ հայ քաջերը տուին զէնքերը,
 Անշարժ կայնած ու բացած ձեռքերը,
 Թուրքը կործանեց հայ քաղաք ու գիւղ,
 Կոտորեց իսպառ, թողեց մոխիր ծուխ,
 Օֆիցերն ասաց. «Еще посмотримъ
 Мы и татаръ такъ не оставимъ»:

ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ-ԱԻԱԳԵԱՆ: